

ԲԻԶՆԵՍԻ ՄԱՆՐԱԾԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասների և ամբողջական պայմանների համար դիմել՝

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ameriabank.am | 010 56 11 11

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2,
Էլ. հասցե՝ office@ameriabank.am

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՄԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն Մանրածախի հաճախորդ հանդիսացող իրավաբանական անձանց առաջարկում է հետևյալ վարկատեսակները՝ ստորև նշված հիմնական պայմաններով: Մանրամասն պայմանները ներկայացված են առանձին աղյուսակներով .

1. Գույքով ապահովված մանրածախ բիզնես վարկային գծեր (օվերդրաֆտ)

	Վարկատեսակ	Գույքով ապահովված մանրածախ բիզնես վարկային գծեր (օվերդրաֆտ) ¹		
	Նպատակ	Բիզնեսի ընդլայնում, ընթացիկ գործունեության ֆինանսավորում և այլ ներդրումներ, ինչպես նաև այլ բանկերում և վարկային կազմակերպություններում գործող բիզնես վարկերի տեղափոխում Ամերիաբանկ ՓԲԸ		
	Հաճախորդներ	Առնվազն 6 ամիս գործունեություն ծավալած իրավաբանական անձիք/անհատ ձեռնարկատերեր		
	Ոլորտային սահմանափակումներ	Զֆինանսավորվող ոլորտների ցանկ		
	Վճարունակության գնահատում ²	Ըստ սահմանված ցուցանիշների		
Վարկի պայմաններ	Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ ³	30-150 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ		
	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	Ժամկետ (ամիս)	12-36		
	Տարեկան տոկոսադրույք (հաստատուն տոկոսադրույքով) ⁴	13.5% (փաստացի տոկոսադրույք՝ 15.2-17.1%)	10.5% (փաստացի տոկոսադրույք՝ 11.8-13.6%)	9% (փաստացի տոկոսադրույք՝ 10.2-11.9%)
	Ժամկետ (ամիս)	37-60		
	Տարեկան տոկոսադրույք (հաստատուն տոկոսադրույքով) ⁴	14.5% (փաստացի տոկոսադրույք՝ 16.0-16.5%)	11.5% (փաստացի տոկոսադրույք՝ 12.6-13.0%)	10.5% (փաստացի տոկոսադրույք՝ 11.5-11.9%)
	Այլ ծրագրային ռեսուրսներով ⁴ տրամադրվող վարկեր ⁵	8.5%-15.0% (փաստացի տոկոսադրույք՝ 9.3-17.0%)	5.5%-12.0% (փաստացի տոկոսադրույք՝ 6.1-13.6%)	4.0%-11.0% (փաստացի տոկոսադրույք՝ 4.5-4.9%)
	Տարեկան տոկոսադրույք չօգտագործված մասի համար	Մինչև 3 %		

Տոկոսադրույքի հետ կապված այլ պայմաններ	Դրամական միջոցներով կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկային գծերի / օվերդրաֆտների դեպքում տոկոսադրույքը սահմանվում է. - վարկի և գրավի նույն արժույթով լինելու դեպքում՝ գործող դրամական միջոցի/պարտատոմսի տոկոսադրույք + 4%, բայց ոչ ավելի քան վերոնշյալ տոկոսադրույքները, -վարկի և գրավի տարբեր արժույթով լինելու դեպքում՝ վերոնշյալ տոկոսադրույքները:	
	Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը Բանկի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը համամասնորեն՝ յուրաքանչյուր գրավի առարկայի ընդհանուր գրավի արժեքում ունեցած իր տեսակարար կշռին համապատասխան, ավելացվում է Բանկի կողմից սահմանված հետևյալ վերադիրների չափով՝ • Ավտոտրասպորտային միջոց 2.5% • Հիմնական միջոց 0.5% Անշարժ գույքի ապահովագրությունը հաճախորդի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը նվազեցվում է 0.05%՝ հաշվի առնելով ընդհանուր գրավային ապահովման մեջ յուրաքանչյուր գույքի տեսակի տեսակարար կշիռը:	
	Մույն պայմաններով սահմանված ապահովվածության (վարկ/գրավ) ցուցանիշի շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:	
	Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից (ՊՄԳ ցուցանիշի) շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:	
	Այլ շեղումների դեպքում տոկոսադրույքը կարող է սահմանվել +0.25%:	
	Վարկի տրամադրման վճար	Վարկի գումարի 1%
	Վարկի գումարի կանխիկացում	Համաձայն բանկում գործող սակագների
	Մարման եղանակ	Համաձայն գրաֆիկի կամ ժամկետի վերջում
Ապահովվածություն	Գրավադրվող գույքի նկարագրություն	Գրավի առարկա կարող է հանդիսանալ Բանկի համար ընդունելի անշարժ գույք ⁶ , տրանսպորտային միջոց, հիմնական միջոց, ոսկով մետաղական հաշիվներ, դրամական միջոցներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր:
	Վարկ/գրավ հարաբերակցություն (որպես արժեք հիմք է ընդունվում լիկվիդիային արժեքը)	Վարկ/Գրավ հարաբերակցությունը, ըստ յուրաքանչյուր գրավատեսակի, հաշվարկվում է հետևյալ առավելագույն սահմանաչափերով. 1 . անշարժ գույք՝ մինչև 100%, 2. տրանսպորտային միջոց՝ 50% 3. հիմնական միջոց՝ 40%, բայց ոչ ավելի քան ընդհանուր գրավի մեջ 30%-ը 4. ոսկու առարկայագուրկ մետաղական հաշիվ Ամերիաբանկում՝ 80% 5. Ամերիաբանկում դրամական միջոցներ և/կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որից. -նույն արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 90% -այլ արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 70%
	Գրավադրվող անշարժ գույքի գտնվելու վայրը	ՀՀ
	Գրավադրվող տրանսպորտային միջոցի տարեթիվը	Արտասահմանյան արտադրության տրանսպորտային միջոցի արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 12 տարի՝ բացառությամբ ռուսական, չինական և պարսկական արտադրության տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 8 տարի
	Գույքի գնահատում	Գրավի առարկայի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից:
	Լրացուցիչ ապահովում	Բիզնեսի հիմնադիրների և իրական շահառուների անձնական երաշխավորությունների առկայությունը պարտադիր է, ինչպես նաև որպես լրացուցիչ ապահովում Բանկը կարող է պահանջել նաև այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն:

	Գույքի ապահովագրություն	Գրավադրվող անշարժ գույքը ապահովագրվում է միայն այն դեպքում, եթե օգտագործվում/օգտագործվելու է ձեռնարկատիրական գործունեության նպատակով: Գրավադրվող անշարժ գույքի, տրանսպորտային և հիմնական միջոցների ապահովագրությունը իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում. 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի/սահմանաչափի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի/սահմանաչափի չափով: Ապահովագրության ենթակա չեն հետևյալ տրանսպորտային միջոցները. • Ավտոմեքենաներ, որոնք կրում են վտանգ սպառնող ապրանքներ՝ տոքսիկ նյութեր, քիմիկատներ, ռադիոակտիվ և պայթյունավտանգ նյութեր: • Ավտոմեքենաներ, որոնք կմասնակցեն մրցույթներին, փորձարկումներին կամ ունեն երեք անիվ, ձնեմաքրող մեքենաներ, մոտոցիկլետներ, հատուկ տեխնիկա հանդիսացող մեքենաներ • Տաքսի ծառայության և վարձով տրվող ավտոմեքենաներ:
Վարկի սպասարկման սակագներ ⁷	Վարկի պայմանների փոփոխություն	25,000 ՀՀ դրամ
	Անշարժ գույք գրավի առարկայի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխություն)	20,000 ՀՀ դրամ
	Տրանսպորտային միջոցի գրավի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխության համար)	10,000 ՀՀ դրամ
	Գրավի առարկայի հետ կապված համաձայնությունների, թույլտվությունների/տեղեկանքների տրամադրում	10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
	Վարկի մարման օրվա փոփոխություն	10,000 ՀՀ դրամ
	Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	1. ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար, ՀՀ ՃՈ Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի համար սահմանված վճար 2. Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի նոտարական վավերացման և Գրավի պայմանագրից ծագող Բանկի իրավունքի պետական գրանցման վճար իրավասու մարմնում, Տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի գրանցման վկայականի համար սահմանված վճար
	Վաղաժամկետ մարում	<i>Վաղաժամկետ մարման տուժանք կամ վճար չի կիրառվում</i>
	Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	<i>Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:</i> <i>Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0.13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:</i>

- ¹ Նշված վարկային գիծը կարող է տրամադրվել ինչպես հաճախորդի ընթացիկ հաշվի միջոցով (օվերդրաֆտ), այնպես էլ առանձին վարկային հաշվի միջոցով (վարկային գիծ):
- ² Դրամական միջոցով և ոսկու առարկայագուրկ մետաղական հաշվով ապահովված վարկերի դեպքում վարկունակության ցուցանիշներ չեն հաշվարկվում, հետևաբար բիզնես վերլուծություն և եկամուտը հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:
- ³ Առանձին դեպքերում կարող են տրամադրվել նշված նվազագույն սահմանաչափից ավելի փոքր չափի գումարով վարկեր սույն պայմաններով սահմանված այն ժամկետովի տարբերակով, որի համար սահմանված տոկոսադրույքի կիրառման պարագայում փաստացի տոկոսադրույքի չափը չի գերազանցի օրենսդրությամբ սահմանված փաստացի տոկոսադրույքի առավելագույն չափը:
- ⁴ Կախված հաճախորդի վարկունակությունից, վարկի ժամկետից և վարկ/գրավ հարաբերակցությունից կիրառվում է ավելի բարձր կամ ցածր տոկոսադրույք:

- 5 Ռեսուրսների ցանկը, արժեքը և մարժան որոշվում է Ֆինանսական և գործառնական դեպարտամենտի կողմից:
- 6 Գեոդեզիական չափագրումը պահանջվում է (բացառությամբ պարսպապատ և տնամերձ հողատարածքների), եթե.
- հաճախորդը դիմել է 50 մլն ՀՀ դրամը գերազանցող վարկի համար և
- հողատարածքի գրավի դիմաց հաշվարկվող վարկային սահմանաչափի մասնաբաժինը ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափում գերազանցում է 30%: Ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափ է համարվում ընդունելի վարկ/գրավ հարաբերակցության սահմաններում Բանկի իրավասու մարմնի որոշմամբ հաճախորդին հասանելի և տվյալ պահին տրամադրման ենթակա վարկային միջոցների հանրագումարը:
- 7 Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է ամենաբարձր սակագինը՝ 1 անգամ: Սակագները կիրառելի չեն դրամական միջոցների, պարտատոմսերի, առարկայագուրկ մետաղական հաշիների գրավով վարկերի համար: Եթե փոփոխությունների շրջանակներում իրականացվում է նոր գրավի ավելացում կամ երաշխավորի ավելացում, ապա սակագինը չի գանձվում: Սակագները չեն տարածվում գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի վրա:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

ՎԱՐԿԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

- 1 Կապիտալի համարժեքության և ընթացիկ լիկվիդայնության ցուցանիշների նախընտրելի մակարդակը կարող է անտեսվել կամ շեղվել՝ կախված ֆինանսավորվող բիզնեսի առանձնահատկություններից. եթե բիզնեսը բավականին եկամտաբեր է սակայն բիզնեսի առանձնահատկությունից ելնելով չի պահանջվում սեփական միջոցներ:
- Դրամական միջոցով և ոսկու առարկայագուրկ մետաղական հաշվով ապահովված վարկերի դեպքում վարկունակության ցուցանիշներ չեն հաշվարկվում, հետևաբար բիզնես վերլուծություն և եկամուտը հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:
- 2 Գեոդեզիական չափագրումը պահանջվում է (բացառությամբ պարսպապատ և տնամերձ հողատարածքների), եթե.
- հաճախորդը դիմել է 50 մլն ՀՀ դրամը գերազանցող վարկի համար և
- հողատարածքի գրավի դիմաց հաշվարկվող վարկային սահմանաչափի մասնաբաժինը ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափում գերազանցում է 30%: Ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափ է համարվում ընդունելի վարկ/գրավ հարաբերակցության սահմաններում Բանկի իրավասու մարմնի որոշմամբ հաճախորդին հասանելի և տվյալ պահին տրամադրման ենթակա վարկային միջոցների հանրագումարը:
- 3 Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է ամենաբարձր սակագինը՝ 1 անգամ: Սակագները կիրառելի չեն դրամական միջոցների, պարտատոմսերի, առարկայագուրկ մետաղական հաշիների գրավով վարկերի համար: Եթե փոփոխությունների շրջանակներում իրականացվում է նոր գրավի ավելացում կամ երաշխավորի ավելացում, ապա սակագինը չի գանձվում:

2. Վարկավորման համար պահանջվող նվազագույն փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ

Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր
Վարկի հայտ-դիմում
Անձնագրեր (բնօրինակը) /Ա/2-ի դեպքում/
Հարկային կոդ, պետ. ռեզիստրի վկայական (Բրավաբանական անձի դեպքում գործադիր մարմնի վերաբերյալ ներդիրը պարտադիր է)
Կանոնադրություն (Բրավաբանական անձի դեպքում)
Իրավ. անձի մասնակիցների, տնօրենի/նախագահի անձնագրերի և սոց. քարտերի պատճենները

Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր.
Վարկառուի և իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց կամ Ա/Ձ-ների պետական գրանցման վկայականների և կից ներդիրների պատճենները
Ֆինանսական հաշվետվությունները վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաստատված հարկային տեսչության կողմից
Վերջին հաշվետու տարվա համար /հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ ներկայացնողների համար/ , վերջին հաշվետու եռամսյակի համար հաստատագրված և/կամ պարզեցված հարկ վճարողների համար
Գործունեության իրականացման վայրի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենը
Իրացման / մատակարարման պայմանագրեր, հայտ-պատվերներ, հաշիվ-ապրաքագրեր, վաճառքների կանոնավոր գործընթաց հաստատող այլ փաստաթղթեր
Գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիաների, սերտիֆիկատների և պահանջվող այլ փաստաթղթերի պատճենները
Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ և/կամ շարժական գույք) սեփականությունը հաստատող փաստաթղթեր
Գրավադրվող հողատարածքի գեոդեզիական չափագրումը
Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ
Նախնական Հաշվետվություն՝ անշարժ գույքի/ տրանսպորտային միջոցի գնահատման վերաբերյալ
Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր.
Անշարժ գույքի սեփականության իրավունքի հիմքերի պատճենները, ներկայացվում են ըստ պահանջի
Գրավադրվող գույքի սեփականատերերի անձնագրեր(կնոջ/ամուսնու) մահվան) վկայականի պատճենը
Անշարժ գույքի սեփականության իրավունքի հիմքերը
Ամուսնության (ամուսնալուծության, (կնոջ/ամուսնու) մահվան) վկայականի պատճենը
Տեղեկանք Անշարժ գույքի Կադաստրի կոմիտեից՝ գույքի պարտավորություններով ծանրաբեռնվածության վերաբերյալ (Միասնական տեղեկանք)
Տեղեկանք Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ
Հիմնական Հաշվետվություն՝ գրավադրվող գույքի գնահատման վերաբերյալ
Անշարժ գույքի/Տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր ըստ անհրաժեշտության
Իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը՝ բանկից վարկի և դրա ապահովման համար առաջարկվող ապահովման միջոցի վերաբերյալ գործարքներ կնքելու մասին
Տեղեկանք գրանցված բաժնետերերի/մասնակիցների/հիմնադիրների, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ (Իրավաբանական անձի դեպքում)
Գործունեության հետ կապված ՀՀ օրենսդրական ակտերով և/կամ բանկի (ռիսկային բնապահպանական գործունեության դեպքում) կողմից պահանջվող բնապահպանական՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության, տեխնիկական անվտանգության և այլ փորձաքննարկական եզրակացություններ, ակտեր; տեխնիկատնտեսական հիմնավորումներ (ըստ անհրաժեշտության)
Այլ փաստաթղթեր՝ Բանկի մասնագետի պահանջով

Պահանջվող փաստաթղթեր (Ավտոմատ հաստատվող/գույքով չապահովված բիզնես վարկ/օվերդրաֆտի, Ավտոմատ հաստատվող արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման բիզնես վարկի, POS/ապարիկ/հաշիվների շրջանառության հիման վրա բիզնես քարտով օվերդրաֆտի դեպքում)

Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր
Իրավ. անձի մասնակիցների, տնօրենի/ԱՁ-ի անձը հաստատող փաստաթուղթ

Հարկային կող
Կանոնադրություն (Իրավաբանական անձի դեպքում)
Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր
Իրավ. անձի մասնակիցների անձը հաստատող փաստաթղթեր
Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ (չի պահանջվում սքորինգի հիման վրա ավտոմատ հաստատվող վարկի/օվերդրաֆտի վրա)
Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր
Իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը՝ բանկից վարկի և դրա ապահովման համար առաջարկվող ապահովման միջոցի վերաբերյալ գործարքներ կնքելու մասին
Ապրանքի ձեռքբերման փաստաթղթեր (պահանջվում է ավտոմատ հաստատվող արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման բիզնես վարկի դեպքում)
Այլ փաստաթղթեր՝ Բանկի մասնագետի պահանջով

Գործի առանձնահատկություններից էլնելով, անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն

3. Այլ դրույթներ

Վարկերի տրամադրում

Վարկի ձևակերպումը կատարվում է Բանկի մասնաճյուղերում:

Վարկի գումարը տրամադրվում է անկանխիկ:

Հաճախորդի ցանկությամբ վարկը, վարկային գիծը, օվերդրաֆտը, պայմանագրի/ պատվերի ֆինանսավորումը կարող են տրամադրվել ցանկացած ողջամիտ նվազագույն ժամկետով, որը սովորաբար մեկ ամիս է:

Վարկերի տոկոսադրույթների հաշվարկման կարգը

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույթի հիման վրա՝ վարկի նվազող մնացորդի նկատմամբ: Որպես բաժանարար հիմք է ընդունվում տարին 365 օր: Տարեկան փաստացի տոկոսադրույթը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույթը հաշվարկվում է այն որոշող պայմանների հիմքով, կրում է կողմնորոշող բնույթ և կարող է Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվել՝ կապված Վարկառուի կողմից Վարկը Պայմանագրով սահմանված ժամկետներից շուտ մարելուց, ինչպես նաև դրանց հաշվարկում ներառված տարրերի փոփոխությունից:

Տարեկան փաստացի տոկոսադրույթը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A - կրեդիտի գումարը /կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը/

n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

Dn –կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն

ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i – տարեկան փաստացի տոկոսադրույթը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

11RBD SM 72-03-02, խմբ. 2

Ուժի մեջ է 25. 07. 2022թ. -ից

Տոկոսագումարի հաշվարկի ներկայացուցական օրինակ

Վարկի սկզբնական գումար – 7,000,000 ՀՀ դրամ
Վարկի տարեկան տոկոսադրույք – 15%
Վարկի ժամկետ – 60 ամիս

Օրական հաշվեգրվող տոկոսագումարը կկազմի $7,000,000 \cdot 15 / 100 / 365 = 2,876.7$

Վարկային գծի/օվերդրաֆտի դեպքում տոկոսադրույքը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ օգտագործված մասի նկատմամբ, իսկ չօգտագործված մասի նկատմամբ կարող է կիրառվել տոկոսադրույք:

Անվանական տոկոսադրույքի փոփոխություն

Բանկն իրավունք ունի պայմանագրի գործողության ընթացքում միակողմանի փոփոխել -տոկոսադրույքի և ֆակտորինգի տրամադրման միանվագ վճարի չափը՝ հիմնվելով ֆինանսական շուկայից Բանկի ներգրավված և/կամ շուկայում տեղաբաշխած միջոցների տոկոսադրույքների տատանումներից և/կամ եթե ֆինանսական շուկայում իրատեսական են դարձել ֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման նախադրյալները, այդ մասին 30 օր առաջ նախապես տեղեկացնելով հաճախորդին:

Արտարժույթով տրամադրվող վարկեր

ՈՒՇԱՂՐՈՒԹՅՈՒՆ!

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ արտարժույթով վարկերի մարումները կատարվում են տվյալ Վարկի արժույթով հաշվից, իսկ դրա վրա անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ նաև ցանկացած արժույթով այլ հաշիվներից, ընդ որում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով, ուստի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված տվյալ արժույթի փոխարժեքի մեծության փոփոխությունից,

ՈՒՇԱՂՐՈՒԹՅՈՒՆ.

ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊԶՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԵԼՈՒ ԵՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՈՒՑԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ, ԵՎ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՈՒՇԱՂՐՈՒԹՅՈՒՆ.

Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝

- Տույժ/տուգանքներ
- Տոկոսագումարներ
- Մայր գումար

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Ձեռն վՄՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՄ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ԳՐԱՎԻ ԱՐԺԵՔԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԱՐՎԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը

Բանկը վարկը հաստատելու վերաբերյալ որոշումը կայացնում է հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջ փաթեթը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը որոշման մասին հաճախորդին տեղեկացնում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը վարկառուին տրամադրվում է պայմանագրով նախատեսված ապահովման պայմանագրերի կնքված լինելու դեպքում: Ընդ որում գույքի գրավադրման դեպքում վարկը վարկառուին տրամադրվում է գրավի պայմանագրերի՝ Բանկի համար ընդունելի ձևով ձևակերպելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելուց, գրավի առարկաները Բանկի պահանջով վերջինիս հետ համագործակցող ապահովագրական ընկերության միջոցով ապահովագրելուց, ինչպես նաև վարկի տրամադրման այլ պայմանները վարկառուի կողմից կատարվելուց 1 (մեկ) աշխատանքային օր հետո:

Հաճախորդի վարկի տրամադրման համար դրական գործոնները կարող են հանդիսանալ՝

- Ֆինանսական դրություն
- Բանկային/Վարկային պատմություն
- Ապահովվածություն
- Կառավարման որակ
- Բիզնես միջավայր
- Փոխկապակցված անձանց գործունեություն և վարկային պատմություն և այլն

Վարկերի մերժման գործոնները՝

- Վարկառուի կողմից ներկայացված տվյալները (փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը) անարժանահավատ են կամ ոչ ամբողջական,
- Վարկառուի եկամուտներն անբավարար են պարտավորությունների մարման համար,
- Վարկառուն ունի վատ վարկային պատմություն, ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ (այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ):

Գույքով ապահովված վարկատեսակների դեպքում անհրաժեշտ վճարները

Գրավադրվող անշարժ կամ շարժական գույքը պարտադիր գնահատվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից՝ հաճախորդի ընտրությամբ: Գույքի գնահատման արժեքը կազմում է 7,000 -30,000 ՀՀ դրամ՝ կախված գույքի տեսակից: Առանձին դեպքերում խոշոր գույքի գնահատման վճարը սահմանվում է պայմանագրային հիմունքներով:

Անշարժ գույքի և տրանսպորտային միջոցի գրավադրմամբ վարկավորման համար վարկառուի կողմից պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկը և դրանց չափը (միջակայքը).

- նոտարական վճար – միանվագ 11,000 ՀՀ դրամ՝ տրանսպորտային միջոցի գրավադրման դեպքում,
- նոտարական վճար – միանվագ 12,500-13,000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի գրավադրման դեպքում,
- նոտարական վճար – միանվագ 7,000 ՀՀ դրամ՝ հիմնական միջոցների գրավադրման դեպքում
- միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ) – 10,000 ՀՀ դրամ,
- անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական – 26,000 ՀՀ դրամ,
- ՀՀ Ոստիկանության վճար (արգելանքի և շարժական գույքի գրավադրման համար) – միանվագ 2,000 ՀՀ դրամ:

- Ապահովագրությունը կատարվում է համապատասխան մասնագիտացած կազմակերպության կողմից, գանձելով միջնորդավճար, համաձայն տվյալ կազմակերպության կողմից սահմանված սակագների և դրույքների, որոնք կարող են փոփոխվել կախված շուկայի իրավիճակից: Ապահովագրավճարները տատանվում են հետևյալ միջակայքում՝

Ապահովագրավճար	Վարկի գումարից %
Անշարժ գույք	0.15-0.25
Սարքավորումներ	0.2-0.35
Շրջանառու միջոցներ	0.3-0.5
Ավտոմեքենա	2.5

Բանկը պահանջում է ապահովագրություն իրականացնել առնվազն վարկի մնացորդի չափով, իսկ համապատասխան գույքն ամբողջ արժեքով ապահովագրելիս ապահովագրական ընկերությունն է որոշում՝ հիմք ընդունել գույքի շուկայական, թե իրացվելի արժեքը:

Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների ցանկ:

Ապահովագրական ընկերություն	Հասցե	Հեռ.
«Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ	ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 110 («Պիացցա Գոանդե» Բիզնես Կենտրոն)	(+37460) 500060
«ՌՈՍԳՈՍՏՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	ք. Երևան, Հյուսիսային պող. 1	(+37410) 591010
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50	(+37410) 592121
«ՌԵՍՈ» ԱՓԲԸ	ք. Երևան, Կոմիտաս 62, տարածք 93-93/1	(+37460) 275757

Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների ցանկ

Գնահատող ընկերություն	Հասցե	Հեռ.
«Կոստ Կոնսալտ» ՍՊԸ	ք. Երևան, Բուզանդի 1	+374 77 471925, +374 91 471925
«Ֆինլոու» ՍՊԸ	ք. Երևան, Նալբանդյան 50, 3 բնակարան	(+374 10) 50 60 00 (+374 60) 74 74 00 (բջջ.) (+374 91) 91 11 55 (բջջ.) (+374 77) 78 05 10 (բջջ.)
«Վի Էմ-Ար Փի» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փակ. 8, թիվ 3	(+374 10) 58 87 97
«Բիլիվ» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի պող., 9-14 շենք	(+374 94) 22 11 11 (բջջ.)
«Ինէքս» ՍՊԸ	ք. Երևան, Օրբելի Եղբայրներ 45/403	(+374 77) 51 81 16 (բջջ.) (+374 55) 51 81 15 (բջջ.) (+374 41) 04 22 87 (բջջ.)
«Ֆոր Սմարթ Կոնսուլտ» ՍՊԸ	ք. Երևան, Գյուլբեկյան փ. 30/3/128 տ.	(+374 11) 27 76 67

(+374 91) 17 76 67 (քջ.)

(+374 41) 17 76 67 (քջ.)

(+374 98) 17 76 67 (քջ.)

*Նշված տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև Ամերիաբանկ ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.ameribank.am,
ինչպես նաև ստորև նշված կոնտակտային տվյալներով:*

Տարաբնույթ հանգամանքներից ելնելով Բանկի կողմից կարող է պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում տալ լրացուցիչ հարցեր: Հաճախորդի պատշաճ նույնականացման անհնարինության կամ հաշիվների սպասարկման անհնարինության դեպքում բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը կարող է սահմանափակվել: Ինչպես նաև, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն:

Քաղվածքներ: Վարկային հաշիվների քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Քաղվածքները տրամադրվում են փոստային հասցեով, էլեկտրոնային փոստով «Ինտերնետ-Բանկ» համակարգի միջոցով, կամ առձեռն՝ բանկի ցանկացած մասնաճյուղից:

Բանկի հետ հաղորդակցման ձևեր

«ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍՏԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՄՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»: